«26» փետրվար 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ N 1

«ՍԹԵՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արարատի մարզի, Արտաշատ համայնքում ֆուտբոլի դպրոցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՖՖ-ՆԾՁԲ-2024/1» ծածկագրով գնման ընթացակարգին (հրավերի հրապարակման ամսաթիվը՝ 2024 թվականի հունվարի 26) մասնակցության հայտ է ներկայացրել **«ՍԹԵՄ» ՍՊԸ-ն** (այսուհետ՝ Ընկերություն):

Ընկերության կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

Չեն ներկայացվել՝

✓ Հրավերով սահմանված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ համապատասխան մասնագիտական փորձը հիմնավորող փաստաթղթերը՝ անձնագիր, դիպլոմ, արտոնագիր, ռեզյումե, աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում), ՊԵԿ-ից տեղեկանք, վկայագիր, հավաստագիր և այլ փաստաթղթեր,

✓ Հրավերով սահմանված աշխատանքային փորձի նվազագույն պահանջները (2020-2023թթ) բավարարելու փաստը հավաստող, այն է՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ /հասարակական շենքերի կառուցման՝ նախագծային/ առնվազն մեկ պայմանագիր: Ընդ որում՝ առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում նախահաշվային գնի հիսուն տոկոսից:

✓ Հրավերով սահմանված բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման լիցենզիաները:

✓ Չի ներկայացվել Էսքիզային նախագիծը՝ էլեկտրոնային տարբերակով (PDF ֆորմատով, 2 A-1 չափի թերթերով):

✓ Թղթային տարբերակով ներկայացված Էսքիզային նախագիծը չի ներառում բացատրագիր,տարածքի գլխավոր հատակագիծ:

✓ Էսքիզային նախագծում նշված է շենքի մակերեսը 420քմ, մինչդեռ՝ հրավերով սահմանվել է 900-1000 քմ ընդհանուր մակերեսով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել հայտերի գնահատման նիստը կասեցնելու և ծանուցելու Ընկերությանն՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ընկերության կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվել են փաստաթղթեր, որով իրականացվել են շտկումներ, սակայն դրանց ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում հետևյալը.

✓ Որպես Հրավերով սահմանված աշխատանքային փորձի նվազագույն պահանջները (2020-2023թթ) բավարարելու փաստը հավաստող ապացույց ներկայացվել է 02.10.2018թ. կնքված թիվ 0198 պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների, այն է՝ «Զանգեզուրի պնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի թիվ 1 մանկապարտեզի երկհարկանի շինության ուժեղացման, վերահատակագծման և կաթսայատան կառուցման համար նախագծի քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության, 22.09.2021թ. կազմված թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրություններ, մինչդեռ՝ հրավերով սահմանվել է, որ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր՝ ունենա նախկինում ֆուտբոլային ենթակառուցվածքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների խորհրդատվական ծառայությունների մատուցման փորձ, ինչպես նաև՝ Հրավերով սահմանվել է, որ առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում նախահաշվային գնի հիսուն տոկոսից, մինչդեռ՝ մասնակցի կողմից ներկայացված արձանագրության մեջ այն դաշտերը, որտեղ նշված է գումարի չափը տեսանելի չեն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.02.2024թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

<u>ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից</u> պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***<u>գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը</u>*** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ

դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

<u>Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում***

մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն, որպես շտկում ներկայացրել է փաստաթղթեր, որոնց ուսումնասիրության արդյունքում կրկին արձանագրվել են անհամապատասխանություններ, այսինքն՝ **«ՍԹԵՄ» ՍՊԸ**-ն «ՀՖՖ-ՆԾՁԲ-2024/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջը և 2023 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. **«ՍԹԵՄ» ՍՊԸ**-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության
Նախագահ
Արմեն Մելիքբեկյան

Կատարող՝ Օ.Կիրակոսյան